



**ԿԱՊԿՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ
<<ԼՈՒՅՍԻ ԿԱՆՉ>>ՍՈՑԻԱԼ-ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

*Այս հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ-
Հայաստանի ֆինանսական օժանդակությամբ և Հանրային քաղաքականության ինստիտուտի
խորհրդատվական աջակցությամբ:*

*Հետազոտության եզրահանգումներն արտահայտում են հեղինակների տեսակետը և կարող են
չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի և Հանրային
քաղաքականության ինստիտուտի ղիրքորոշումների և տեսակետների հետ:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
1. ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀՀ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	5
2. ԿԱՊԿՈՒ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄԸ և ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ	7
3. ԿԱՊԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	15
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	16
ՀԱՎԵԼՎԱԾ 1	18
ՀԱՎԵԼՎԱԾ 2	21
ՀԱՎԵԼՎԱԾ 3	23
ՀԱՎԵԼՎԱԾ 4	26
ՀԱՎԵԼՎԱԾ 5	0

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի՝ Կրթության առանձնահատուկ պայմանների կախք ունեցող (ԿԱՊԿՈՒ) անձր ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող անձն է, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացվելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմանները:

«ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության իրավունքի իրացման մշտադիտարկում Արմավիրի մարզի համայնքներում» ծրագրի նպատակն է ուսումնասիրել, թե որքան արդյունավետ է իրականացվում ներառական կրթությունը Արմավիրի մարզի Գայ, Ջրառատ և Աղավնատուն համայնքների միջնակարգ դպրոցներում, բացահայտել ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության իրավունքի իրացման խնդիրները, գնահատել դասապրոցեսին նրանց ներգրավվածության և մասնակցության որակը, պարզել ԿԱՊԿՈՒ երեխայի նկատմամբ շրջապատի վերաբերմունքի բնույթը, ուսումնասիրել հաշմանդամություն ունեցող երեխաների կրթական խնդիրները նշված համայնքներում:

Նշված նպատակի իրականացման համար անհրաժեշտ է.

1.Պարզել, թե ինչպիսին է եղել ներառական կրթության ազդեցությունը.

- ԿԱՊԿՈՒ և այլ աշակերտների շրջանում գիտելիքների և կարողությունների զարգացման համատեքստում:

- Պարզել, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել ներառական կրթությունը աշակերտների միջանձնային փոխհարաբերությունների ձևավորման և զարգացման վրա:

2.Բացահայտել հանրակրթական դպրոցներում ներառական կրթության վերաբերյալ մոտեցումները և կիրառվող մեթոդները.

- Ուսումնասիրել ուսուցիչների կողմից կիրառվող մեթոդները:
- Պարզել, թե ինչպիսի դիրքորոշում ունեն գործընթացում ներգրավված աշակերտների ծնողները ներառական կրթության վերաբերյալ:

3.Պարզել ուսուցիչ-աշակերտ և աշակերտ-դպրոց փոխհարաբերությունները.

- ԿԱՊԿՈՒ աշակերտ-ծնող փոխհարաբերությունների ազդեցությունը դասապրոցեսի կազմակերպման վրա:

¹ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, 2014-
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=94683>

- Բացահայտել ներառական կրթության և հանրակրթական ծրագրով համատեղ սովորող աշակերտների դասապրոցեսի արդյունավետ կազմակերպմանը խոչընդոտող և նպաստող գործոնները:

Հաշվի առնելով հետազոտության նպատակները և հետազոտության առջև դրված խնդիրները և ուսումնասիրվող հարցերը՝ առավել նպատակահարմար է կիրառել հետազոտության որակական մեթոդներ՝ իրականացնելով խորքային հարցազրույցներ ներառական կրթության համակարգում ներառված տարբեր օղակների ներկայացուցիչների հետ: Այս շրջանակներում դիտարկման են ենթակա ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի վարքաբանական և մեթոդական մոտեցումները:

Առանցքային տեղեկատուների հետ խորքային հարցազրույցի մեթոդն ընտրվել է ամբողջացնելու համար ուսումնասիրվող երևույթի մասին ստացվող պատկերը: Տվյալ դեպքում տեղեկատվության ստացման աղբյուր են հանդիսանում ոչ միան «ծառայություն ստացողները», այլև ծառայություն մատուցողները: Այս շրջանակներում խորքային հարցազրույցներ են իրականացվել Գայ, Ջրառատ և Աղավնատուն համայնքների դպրոցների ԿԱՊԿՈՒ երեխաներին դասավանդող ուսուցիչների, դպրոցի տնօրենների, բազմամասնագիտական թիմի անդամների, ԿԱՊԿՈՒ երեխաների և նրանց ծնողների հետ:

1. ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀՀ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Համաձայն ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից ներկայցված տվյալների՝ հաշմանդամություն ունեցող անձանց 80%-ը ապրում է զարգացող երկրներում: Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են բնակչության 6,2% (Արցախյան երկրորդ պատերազմի արդյունքում թվերը կփոփոխվեն), ինչը բավական մեծ թիվ է 3 միլիոն բնակչություն ունեցող պետության համար: Անկախացումից ի վեր Հայաստանը մի շարք քայլեր է իրականացրել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական իրավունքների պաշտպանության իրավական հիմքեր ձևավորելու հարցում: Հաշմանդամության վերաբերյալ համաշխարհային մակարդակով տարվող քաղաքականության ազգայնացման ուղղությամբ մի շարք օրակարգային պահանջներ են դրվել:

Այս շրջանակներում 2005 թվականին ներառական կրթության օրենսդրական հիմքերը ձևավորվեցին, երբ ՀՀ Ազգային ժողովն ընդունեց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց մասին օրենք¹: Այնուհետև որոշում կայացվեց դարձնել այն հանրակրթության մասին օրենքի բաղկացուցիչ, ուստի՝ 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունվեց «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության: Համաձայն օրենքի՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը:

- Ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:
- Կկիրառվի երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենքի կիրարկման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից:
- Մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը՝ Հայաստանի Հանրապետության

¹ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=67166>

յուրաքանչյուր մարզում գործող առնվազն մեկ, Երևան քաղաքում՝ առնվազն չորս հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն վերակազմակերպվելու է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի²:

Ներառական կրթական համակարգի կայացումը իրավական կարգավորումներից զատ պահանջում է համընդհանուր և համակցված գործողություններ, որոնք կերաշխավորեն ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության իրավունքի արդյունավետ իրացումը: Առաջին քայլերն այս ուղղությամբ իրականացվել են 2001 թվականին, երբ 181 դպրոցներում ներդրվել է ներառական համակարգ՝ ներգրավելով շուրջ 300 ԿԱՊԿՈՒ աշակերտների: Ինչպես նշվեց, նախատեսվում է 2025 թվականին անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, ուստի՝ անհրաժեշտ է պարզել, թե ինչպիսին են ներդրված համակարգի հիմքերը ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության իրավունքի իրացման տեսանկյունից, և որքանով է իրատեսական արդյունավետ համակարգի կայացումը:

2016 թվականին Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն իրականացրեց Սոցիալական խարտիայի դրույթների իրականացման վերաբերյալ մշտադիտարկում և գնահատում: Մշտադիտարկման արդյունքերը հստակորեն ներկայացնում են դրությունը Հայաստանում՝ մատնանշելով բացթողումները և բարեփոխումների անհրաժեշտությունը: Համաձայն վերոնշյալ զեկույցի՝ զուտ ԿԱՊԿՈՒ երեխաների ներգրավումը հանրակրթական դպրոցներում ընդունելի մոտեցում չէ: Կոմիտեն նշում էր հանրակրթական դպրոցները պետք է նախընտրելի լինեն ԿԱՊԿՈՒ երեխաների համար, սակայն ներկա պայմաններում արտաքին օժանդակությունը չափազանց կարևոր է նրանց համար: Կոմիտեի գնահատմամբ ԿԱՊԿՈՒ երեխաների ներառումը հանրակրթական դպրոցներում երաշխավորելու համար անհրաժեշտ է մշակել խտրականությունն արգելող օրենսդրություն: Ընդհանուր արդյունքներն ամփոփելով՝ կոմիտեն եկել է այն եզրակացության, որ ներառական համակարգի կայացման համար չկան նշանակալի խոչընդոտներ³:

Հետազոտությունը, միտված լինելով Արմավիրի մարզի Գայ, Աղավնատուն և Ջրառատ համայնքների միջնակարգ դպրոցներում ներառական կրթության իրականացման արդյունավետության գնահատմանը և հիմնական խոչընդոտների մեկնաբանմանը, անդրադարձ է կատարելու ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ հանրակրթական դպրոցներում առկա վերաբերմունքային և մեթոդական մոտեցումներին, ինչն առնչվում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներին:

² «Հանրակրթության Մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքում Լրացումներ Եվ Փոփոխություններ Կատարելու Մասին- <https://www.arlis.am/documentview.aspx?docid=94683> :

³ CoE European Committee of Social Rights, *Report on the Non-Accepted Provisions of the European Social Charter*, 8–9. Yerevan, 2016. <https://rm.coe.int/090000168066b9a0>

2. ԿԱՊԿՈՒ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄՆ ՈՒ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Արմավիրի մարզի Գայ, Աղավնատուն և Ջրառատ համայնքների հանրակրթական դպրոցներում անցկացված մշտադիտարկման արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ, որոնց բախվում են ինչպես ԿԱՊԿՈՒ անձինք, այնպես էլ ուսուցչական անձնակազմը և ծնողները: Ինչպես արդեն նշվել է, համակողմանի պատկեր ստանալու համար խորքային հարցազրույցներ են անցկացվել ԿԱՊԿՈՒ աշակերտների, նրանց ծնողների, ուսուցիչների, բազմամասնագիտական թիմի անդամների և դպրոցի տնօրենների հետ:

Ընդհանուր առմամբ 3 դպրոցներից ներգրավված են եղել 32 ուսուցիչներ, ովքեր աշխատում են 19 ԿԱՊԿՈՒ երեխաների հետ՝ 12-ական ուսուցիչ՝ Գայ և Աղավնատուն համայնքների հանրակրթական դպրոցներից, 8-ը՝ Ջրառատ համայնքի հանրակրթական դպրոցից: Յուրաքանչյուր երեխայի հետ աշխատող 2-ական ուսուցիչ է մասնակցել հարցազրույցին, եղել են նաև համընկնումներ, երբ մեկ դասարանում սովորում են մեկից ավելի ԿԱՊԿՈՒ աշակերտներ:

Ուսուցիչները, փորձելով առանձնացնել ներառական կրթության դրական և բացասական կողմերը, մեծամասնությամբ դրական կողմն են համարում ԿԱՊԿՈՒ աշակերտների սոցիալականացումը և շփման հաստատումը, իսկ բացասական կողմը համարում են ժամանակի սղությունը, դասապրոցեսի խանգարումը, ուշադրության և ժամանակի ճիշտ բաշխումը: Միաժամանակ հնչել են նաև խտրական վերաբերմունք և դժգոհություն դրսևորող պատասխաններ:

«Դրականն այն է, որ ԿԱՊԿՈՒ երեխաները դուրս չեն մնում հասարակությունից, շփվում են, փակվել են հատուկ դպրոցները: Բացասականն այն է, որ վիրավորանքներ են զգում, տարբերվում են, ճնշվում, լարվածություն է ուսուցչի համար: Նմանները նմանների հետ պետք է շփվեն:»

ԿԱՊԿՈՒ աշակերտին դասավանդող ուսուցիչ

«Նմանները նմանների հետ պետք է շփվեն» արտահայտությունը նշվել է մի շարք ուսուցչների կողմից, ինչը ինքնին փաստում է տվյալ անձանց կողմից ներառականության գաղափարի մերժման մասին: Այսինքն՝ ուսուցչական անձնակազմի տվյալ ներկայացուցիչների մոտ կա մոտեցման խնդիր, ինչը հավելյալ խոչընդոտ է ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքում: Մասնակից ուսուցիչներից միայն 5-ն էն նշել հատուկ դպրոցների պահպանման անհրաժեշտությունը՝ պնդելով, որ ֆիզիկական խնդիրների դեպքում հնարավոր է որոշակի հաջողություններ գրանցել, սակայն վարքաբանական և մտավոր խնդիրների դեպքում չափազանց բարդ է: Նշված ուսուցիչները աշխատում են վարքաբանական և մտավոր խնդիրներ ունեցող աշակերտների հետ:

«Հատուկ նախատեսված հաստատություններն ավելի արդյունավետ էին, քան հանրակրթական դպրոցներում ներառելը: Ընդհանուրի մեջ չեն կարողանում յուրացնել նյութը»
ԿԱՊԿՈՒ աշակերտին դասավանդող ուսուցիչ

ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքում առկա հիմնական բարդությունները և խնդիրները ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ անհատական խնդիրների հետ մեկտեղ ուսուցիչների մեծամասնությունը առանձնացնում է կենտրոնացումը, պասիվությունը, մյուս աշակերտների ուշադրության շեղումը որպես հաճախ հանդիպող և դասապրոցեսի արդյունավետության վրա ազդող գործոններ: Նշված խնդիրները լուծելի են ուսուցչի օգնականի արդյունավետ ներգրավման միջոցով: Ինչպես հայտնի է ուսուցչի օգնականը շատ դեպքերում ներգրավված չէ ողջ դասապրոցեսին: Միայն մեկ ԿԱՊԿՈՒ աշակերտի դեպքում է նշվել, որ աշակերտը ողջ դասապրոցեսի ընթացքում ստանում է ուսուցչի օգնականի աջակցությունը: Իսկ համաձայն Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի՝ ուսուցչի օգնականների թիվը որոշվում է սվյալ դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկի հարաբերակցությունից, այսինքն՝ բոլոր ԿԱՊԿՈՒ աշակերտների դեպքում ողջ դասապրոցեսի ընթացքում ուսուցչի օգնականի ներկայությունը պրակտիկորեն հնարավոր չէ, և այն սահմանվում է ԱՈՒՊ-ով:

«ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ 100% -ով լիարժեք զբաղվել հնարավոր չէ, դասը կձախողվի, աշխատում ենք ինչ-որ չափով: Եթե ուշադրությունը կենտրոնացնենք միայն իրենց վրա, դասը կձախողվի, մյուս աշակերտները կտուժեն:»

ԿԱՊԿՈՒ աշակերտին դասավանդող ուսուցիչ

Մոնիթորինգի շրջանակներում խնդիր էր դրվել ուսումնասիրել ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացումը համադասարանցիների հետ շփման տեսանկյունից, ուստի՝ խորքային հարցազրույցի հարցաշարում ներառվել են նաև այս խնդիրը շոշափող մի քանի հարցեր: Այն հարցին, թե ովքեր են ԿԱՊԿՈՒ աշակերտների ընկերները, ուսուցիչների մեծամասնությունը նշում է՝ համադասարանցիները: Նրանք պնդում են, որ ԿԱՊԿՈՒ երեխաները մեկուսացված չեն և նրանց նկատմամբ չկա խտրական վերաբերմունք: Սակայն այս պնդումների միջև հակասականություն է նկատվում, երբ խնդիրը դիտարկվում է այլ հարցերի համատեքստում: Մասնավորապես վարքաբանական և խոսքի խանգարումներ ունեցող ԿԱՊԿՈՒ աշակերտների վերաբերյալ ուսուցիչների կողմից հնչել են բնորոշումներ, որ նրանք «ազդեցիկ» են և այդ պատճառով համադասարանցիների հետ շփումը չի ստացվում:

«Մտահոգվում եմ, որ երեխան ամեն անգամ տուն է վերադառնում ընկճված՝ երեխաների հետ վատ հարաբերություն ունենալու պատճառով:»

ԿԱՊԿՈՒ աշակերտի ծնող

ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքում հաջողության հասնելու կարևորագույն գործոններից է համարվում ուսուցիչ-ծնող արդյունավետ համագործակցության հաստատումը: Այս տեսանկյունից պատկերը միանշանակ չէ, ուսուցիչները փաստում են ծնողների մի մասի ուշադիր և հոգատար վերբերմունքի և համատեղ աշխատանքի արդյունքում գրանցված փոքրիկ հաջողությունների մասին: Սակայն որոշ դեպքերում այս համագործակցությունը չի ստացվում ծնողների զբաղվածության, ոչ բավարար ներգրավվածության արդյունքում: Ինչպես շատ դեպքերում, այնպես էլ այս մշտադիտարկման թիրախ հանդիսացող ԿԱՊԿՈՒ աշակերտների դեպքում մեծ մասը ունի նաև սոցիալական և ընտանեկան խնդիրներ, ինչը նրանց նկատմամբ կրկնակի խտրականության պատճառ է դառնում: Նշված գործոնները հիմք են հանդիսանում նաև ծնողների ոչ բավարար տեղեկացվածության և դրա արդյունքում երեխաների կրթական և դաստիարակչական գործընթացում պասիվ ներգրավվածության և դպրոց-ուսուցիչ համագործակցության տապալման համար:

«Ընտանիքը ճիշտ չի ընկալում երեխայի հոգեվիճակը, ծեծում են: Դպրոցի նկատմամբ հարգանքը բացակայում է:»

ԿԱՊԿՈՒ աշակերտին դասավանդող ուսուցիչ

Համաձայն է, որ ներառական կրթությունը շարունակի մնալ և էլ ավելի լավ աշխատանքներ տարվեն:

ԿԱՊԿՈՒ աշակերտի ծնող

Նրանք միաժամանակ փաստում են, որ երեխաների հետ աշխատող բոլոր ուսուցիչները դրականորեն են տրամադրված և ամեն կերպ աշխատում են որևէ արդյունքի հասնել: Ծնողներն ընդհանուր առմամբ դրական են գնահատում ուսուցիչների և բազմամասնագիտական խմբի ջանքերն ու աշխատանքը: Ծնողներից ոմանք նշել են, որ իրենք չեն կարողանում միջամտել երեխայի կրթական գործընթացին ժամանակի սղության, նաև անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների բացակայության պատճառով: Ուստի՝ երեխաների մոտ նկատելի տեղաշարժեր չկան:

«Ես ինքս ժամանակ չեմ ունենում իմ երեխայի հետ աշխատել: Դա պայմանավորված է իմ հիվանդությամբ և ընտանեկան վիճակով: Բայց ուզում եմ, որ դպրոցում իմ երեխայի հետ ավելի շատ աշխատեն:»

ԿԱՊԿՈՒ աշակերտի ծնող

Նշված երեք հանրակրթական դպրոցներում ներառված 19 ԿԱՊԿՈՒ երեխաների մի մասը, ովքեր ունեն խոսքային խանգարումներ և վարքաբանական խնդիրներ, չեն մասնակցել հարցազրույցին: Մասնակից ԿԱՊԿՈՒ աշակերտների պատասխանների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ոմանք ընկճված են և շփման խնդիր ունեն: Մի քանի ԿԱՊԿՈՒ աշակերտների կողմից հնչեցված պատասխաններն էլ փաստում են ընտանիքում երեխայի նկատմամբ վերաբերմունքի, ու դրա շնորհիվ բարդությունների հաղթահարման մասին: Ի պատասխան <<Ինչպես կնկարագրես ինքդ քեզ>> հարցի՝ հնչել են հետևյալ պատասխանները.

«Ես պապայի ամենալավ աղջիկն եմ:»

«Լավ տղա եմ, սիրուն տղա եմ:»

«Լավն եմ, աշխույժ եմ, ուժեղ եմ, բոլորին ծեծում եմ:»

ԿԱՊԿՈՒ աշակերտներ

Պետք է նշենք, որ կան նաև դեպքեր, երբ ԿԱՊԿՈՒ երեխան ի սկզբանե սովորել է հատուկ կրթական հաստատությունում, այնուհետև տեղափոխվել հանրակրթական դպրոց: Նրանց դեպքում ներառման խնդիրն ավելի բարդ է, ինչպես փաստում են ծնողները և հենց աշակերտները, քանի որ սովորել են այլ մեթոդներով: Նրանց մոտ միաժամանակ սոցիալականցման խնդիրն ավելի սուր է. համադասարանցիների հետ չի հաջողվում շփում հաստատել:

3. ԿԱՊԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հետազոտության շրջանակներում խնդիր էր դրվել նաև անդրադառնալ ուսուցիչների կողմից ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքներում կիրառվող հիմնական մեթոդներին: Խորքային հարցազրույցների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսուցիչները մեծամասամբ կարիք ունեն ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքի պրակտիկ մեթոդների վերաբերյալ գիտելիքների թարմացման: Հարցերին, թե ինչպիսի մեթոդներ են կիրառում և որն է ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքում առաջացած խնդիրների լուծումը, գրեթե բոլորի կողմից հնչում էր, որ կիրառում են անհատական մոտեցում և դիմում պարզեցված հարցերի կիրառմանը: Մասնակից բոլոր ուսուցիչները դժվարացան անվանել կոնկրետ մեթոդներ կամ պրակտիկ վարժություններ, որոնք կիրառում են ԿԱՊԿՈՒ աշակերտների ներգրավման համար:

«Տեղում օգնում, ինտեգրում ենք խմբային աշխատանքներում, կյանքի հետ կապված իրենց օրինակների և պարզ հարցերի միջոցով հետաքրքրություն ենք առաջացնում և ներգրավում:»

ԿԱՊԿՈՒ աշակերտին դասավանդող ուսուցիչ

Աշակերտների միջև կապը և համագործակցությունը ամրապնդելու, ԿԱՊԿՈՒ աշակերտի նկատմամբ խտրականությունը բացառելու նպատակով ուսուցիչներից մեկը նշեց, որ ուսուցման ընթացքում առաջացած խնդիրները և բարդությունները լուծում է մյուս աշակերտների ներգրավման միջոցով, ինչը բավական արդյունավետ և խրախուսելի մոտեցում է:

Մեթոդական խնդիրները, որին հանդիպում են հարցազրույցին ներգրավված գրեթե բոլոր ուսուցիչները բուհական կրթության բացի և վերապատրաստմանների պակասի արդյունք են: Ուսուցիչները փաստում են, որ կրթության և ուսումնական պրակտիկայի ընթացքում չեն ուսումնասիրել ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքի մեթոդներ, իսկ վերապատրաստումները, որոնք կազմակերպվել են, եղել են կարճատև:

Ներկայցված խնդիրների լուծումը ըստ օրենքի՝ բազմամասնագիտական թիմի և տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի ներկայացուցիչների ներգրավումն է, ովքեր տիրապետում են անհրաժեշտ բոլոր մեթոդներին և պետք է լրացնեն առաջացած բացերը: ներգրավումն է, ովքեր տիրապետում են անհրաժեշտ բոլոր մեթոդներին և պետք է լրացնեն առաջացած բացերը: Ուսուցիչները ևս փաստում են, որ արդյունավետ համագործակցության պարագայում հնարավոր է հասնել արդյունքերի: Նշենք, դիարցազրույցին մասնակցած ծնողները մեծմասամբ դրական են գնահատում բազմամասնագիտական թիմի աշխատանքը, սակայն նաև նշում են, որ շոշափելի արդյունքներ և փոփոխություններ երեխաների կրթական նվաճումներում, նաև վարքում դեռևս չկան: Ըստ ծնողների՝ կա ինչպես բազմամասնագիտական թիմի, այնպես էլ տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների ներգրավվածությունը մեծացնելու անհրաժեշտություն:

«Եթե լավ աշխատեն , ինչ-որ խնդիրների չենք բախվի և կցանկանանք, որ տարածքային մասնագետներն ավելի հաճախակի գան մեր դպրոց:»

ԿԱՊԿՈՒ աշակերտի ծնող

Որոշ ծնողներ միաժամանակ նշել են, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների համար հատուկ կահավորված, դիդակտիկ նյութերով հարուստ դասասենյակների առկայության դեպքում դասապրոցեսն ավելի հետաքրքիր կդառնա նրանց համար, սա նաև ուսուցչների համար որոշակիորեն լուծում կդառնա՝ հաղթահարելու ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքում առաջացած խնդիրները:

Ուսուցիչները մեծամասամբ մշտադիտարկման թիրախ հանդիսացող ԿԱՊԿՈՒ աշակերտների գիտելիքները գնահատում են միջինից ցածր. շատերն ունեն տառաճանաչության խնդիր: Այսինքն՝ ներգրավված մասնագետների աշխատանքերի արդյունքում դեռևս ակնառու փոփոխություններ չեն գրացվել, թեև կան փոքրիկ հաջողություններ, և ծնողները դրական են գնահատում մասնագետների աշխատանքը և վերաբերմունքը: Համավարակով պայմանավորված կրթական ծրագրերի փոփոխությունները և որոշ ժամանակ դասերի հեռավար կազմակերպումն էլ իր հերթին ազդեցությունն են ունեցել՝ խոչընդոտելով ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ արդյունավետ աշխատանքին:

Ծնողներից մեկը նշում է, որ երեխայի խոսքի զարգացման, նաև կրթության գործընթացի պատշաճ կազմակերպման համար միայն դպրոցում կատարված աշխատանքները բավարար չեն, ուստի այլ մասնագետների դիմելու անհրաժեշտություն է առաջանում: Իհարկե նշվածը պահանջում է հավելյալ ռեսուրսներ և ժամանակ, ինչի հնարավորությունը ոչ բոլոր ԿԱՊԿՈՒ աշակերտները և ծնողներն ունեն:

«Լավ մասնագետներ լինեն, ավելի ուշադիր լինեն երեխաների նկատմամբ, որ արդյունքի հասնեն, որ գոնե տառաճանաչ դառնան: Մենք մի քանի բան համատեղում

ենք, որ արդյունք լինի, միայն դպրոցում չէր լինի ոչինչ: Երևի ժամանակի ընթացքում կհասնենք արդյունքի:»

ԿԱՊԿՈՒ աշակերտի ծնող

Մասնակից ԿԱՊԿՈՒ աշակերտների պատասխանների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ աշակերտներին գրավում են հատկապես կերպարվեստ, տեխնոլոգիա, ֆիզկուլտուրա առարկաները: Ինչպես հայտնի է, այս առարկաները խաղային տարրեր են ներառում և հիմնված են դիդակտիկ նյութերի հետ աշխատանքի վրա, ինչի պահանջն ունեն ԿԱՊԿՈՒ երեխաները: Մշտադիտարկման աշխատանքներում ներգրավված մասնագետներից մեկը նշում էր, որ հատուկ կրթական հաստատություններում ԿԱՊԿՈՒ աշակերտներն արհեստներ սովորելու և դրանց միջոցով իրենց կարողությունները զարգացնելու հնարավորություն ունենին, ինչի բացը ներկայումս նկատվում է հանրակրթական ծրագրերում և ԿԱՊԿՈՒ աշակերտների համար մշակված ԱՌԻՊ-ներում:

Մշտադիտարկում իրականացրած 3 հանրակրթական դպրոցներից յուրաքանչյուրից հարցազրույցին մասնակցել է 1 ուսուցչի օգնական և 1 բազմամասնագիտական թիմի անդամ: Ինչպես նախկինում կատարված հետազոտությունները փաստում են, բազմամասնագիտական թիմի հետ կապված խնդիրներից մեկն այն է, որ հաճախ ներգրավված մասնագետներն ունենում են մեկ այլ կրթություն՝ թիմում ներգրավվելով բոլորովին այլ մասնագիտությամբ⁴: Հարցազրույցների արդյունքում նկատեցինք, որ նման խնդիր կա նաև մշտադիտարկման թիրախ հանդիսացող դպրոցներից մեկում, որտեղ սոցիալական մանկավարժի կրթությամբ անձը աշխատում է որպես հոգեբան: Այսինքն՝ այս մասնագետների դերերի և գործառույթների մասին պատկերացումները և տարանջատումները շարունակում են անհստակ լինել այս դպրոցի կտրվածքով:

Հարցազրույցի մասնակից բազմամասնագիտական թիմի անդամները նշում են, որ հիմնական խնդիրներն առաջանում են ԱՌԻՊ-ների կազմման ընթացքում: Նաև նշվում է, որ ծնողների համար ևս դժվարությամբ է ընդունվում երեխայի խնդիրներ ունենալու և ԱՌԻՊ-ով աշխատելու անհրաժեշտության փաստը: Նշենք նաև, որ այս մասնագետները մասնակցել են Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից կազմակերպված ԱՌԻՊ-ների կազմման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներին: Նշվեց նաև, որ ըստ սահմանվածի յուրաքանչյուր ԿԱՊԿՈՒ երեխայի

⁴ « ՀՀ-ու մ ներառական կրթության իրականացման գնահատում», էջ 35
https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_8.pdf

հետ աշխատանքի համար շաբաթական 25-50 բուպեն բավարար չէ, ինչի մասին փաստում էին նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողներն ու ուսուցիչները:

Ուսուցչի օգնականները փաստում էին ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների հետ սերտ համագործակցության մասին և նշում, որ հնարավոր է լինում արդյունքի հասնել բոլոր ներգրավված անձնանց ջանքերի և համագործակցության արդյունքում: Ուսուցչի օգնականներից մեկը նշում է, որ ծնողի և տնօրենի միջև համաձայնության դեպքում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ հավելյալ աշխատանք են կատարում արտաժամյա՝ դասերից հետո: Նշվածը ևս փաստում է, որ արդյունավետ աշխատանքի համար մասնագետների ներգրավվածությունը ընդլայնելու կարիք կա:

Ըստ նախատեսվածի՝ խորքային հարցազրույներ են անցկացվել նաև նշված հանրակրթական դպրոցների տնօրեն/փոխտնօրենների հետ: Մասնակից փոխտնօրեններից մեկը միանշանակ դեմ արտահատվեց ներառական կրթությանը՝ պնդելով, որ այն ոչ արդյունավետ է: Մյուսները նշում են, որ արդյունավետությունը բարձրացնելու համար կա հատուկ պայմանների ստեղծման անհրաժեշտություն: Այդ պայմանների ստեղծման և որպես ներառական կրթության հիմնական խոչընդոտ նշվեց ուսուցիչների հմտությունների պակասը: Թեև ուսուցիչների մի մասը անցել է համապատասխան կարճաժամկետ վերապատրաստումներ, սակայն դրանք բավարար չեն անհրաժեշտ արդյունքի հասնելու և մեթոդական խնդիրներն ու մոտեցումները լուծելու համար: Դպրոցներից մեկի տնօրենի կարծիքով՝ հատուկ պայմանների շարքում է նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների համար արհեստագործական դասերի կազմակերպումը, ինչը հիմնավորված կարող ենք համարել՝ հաշվի առնելով խորքային հարցազրույցների մասնակից ԿԱՊԿՈՒ աշակերտների հետաքրքրությունների և սիրած առարկաների շրջանակը. հիմնականում նշել էին կերպարվեստ և ֆիզկուլտուրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տվյալ մշտադիտարկման շրջանակներում, որն իրականացվել է Արմավիրի մարզի Աղավնատուն, Գայ, Ջրառատ համայնքների հանրակրթական դպրոցներում, առաջ քաշված հիմնական խնդիրներ էին .

1.Պարզել, թե ինչպիսին է եղել ներառական կրթության ազդեցությունը.

- ԿԱՊԿՈՒ և այլ աշակերտների շրջանում գիտելիքների և կարողությունների զարգացման համատեքստում:

- Պարզել, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել ներառական կրթությունը աշակերտների միջանձնային փոխհարաբերությունների ձևավորման և զարգացման վրա:

2.Բացահայտել հանրակրթական դպրոցներում ներառական կրթության վերաբերյալ մոտեցումները և կիրառվող մեթոդները.

- Ուսումնասիրել ուսուցիչների կողմից կիրառվող մեթոդները:

- Պարզել, թե ինչպիսի դիրքորոշում ունեն գործընթացում ներգրավված աշակերտների ծնողները ներառական կրթության վերաբերյալ:

3.Պարզել ուսուցիչ-աշակերտ և աշակերտ-դպրոց փոխհարաբերությունները.

- ԿԱՊԿՈՒ աշակերտ-ծնող փոխհարաբերությունների ազդեցությունը դասապրոցեսի կազմակերպման գործընթացի վրա:

- Բացահայտել ներառական կրթության և հանրակրթական ծրագրով համատեղ սովորող աշակերտների դասապրոցեսի արդյունավետ կազմակերպմանը խոչընդոտող և նպաստող գործոնները:

1. Նշված հանրակրթական դպրոցներում ներգրավված աշակերտների գիտելիքները և կարողությունները ուսուցիչների կողմից գնահատվում են որպես միջինից ցածր, ցածր: Կատարված աշխատանքների արդյունքներում կան փոքրիկ փոփոխություններ, սակայն ԿԱՊԿՈՒ երեխաներից շատերի մոտ կատառճանաչության խնդիր, չնայած ներգրավված աշակերտների մեծ մասը սովորում է միջին դասարաններում:
2. ԿԱՊԿՈՒ աշակերտների սոցիալականցման և համադասարանցիների հետ փոխհարաբերությունների ձևավորման վերաբերյալ մշտադիտարկման արդյունքներն անհատական են: Այս տեսանկյունից հատկապես բարդ են մտավոր և վարքաբանական խնդիրներ ունեցող աշակերտների դեպքերը: Երբ նշվածին զումարվում են նաև սոցիալական խնդիրները, ԿԱՊԿՈՒ աշակերտները ենթարկվում են կրկնակի խտրականության:
3. Ուսուցիչներն ունեն ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատելու և դասապրոցեսին

նրանց ներգրավվումն ապահովելու հետ կապված մեթոդական խնդիրներ: Նրանք մեծամասամբ որպես մեթոդ նշում են անհատական մոտեցումը, դժվարանում են անվանել պրակտիկ վարժություններ և մեթոդներ, որոնք հաճախ կիրառում են դասապրոցեսին աշակերտների պատշաճ ներգրավման համար:

4. Ծնողների վերաբերմունքը և տրամադրվածությունը ներառական կրթական համակարգի նկատմամբ մեծամասամբ դրական է: Ծնողները կողմ են համընդհանուր ներառականության ներդրմանը՝ որոշակի բարեփոխումներով հանդերձ: Ըստ նրանց՝ համակարգը նպաստում է ԿԱՊԿՈՒ երեխաների հասակակիցների հետ շփմանը:
5. Ծնողների ներգրավվածությունը և ազդեցությունը ԿԱՊԿՈՒ աշակերտների կրթական գործընթացին ևս անհատական է: Սոցիալական և այլ խնդիրների պատճառով որոշ ծնողներ դուրս են մնում այս գործընթացից, ինչն իր ազդեցությունն է ունենում աշխատանքի արդյունավետության վրա:
6. Որպես դասապրոցեսի արդյունավետ կազմակերպմանը խոչընդոտող հիմնական գործոն՝ ուսուցիչների կողմից նշվում է ժամանակի պակասը: Այսինդրի հաղթահարման համար ուսուցիչների և ծնողների կողմից առաջարկվում է մեծացնել բազմամասնագիտական թիմի և ուսուցչի օգնականների ներգրավվածությունը:
7. Ուսուցչական անձնակազմի մի մասի համար ընդունելի չէ ներառական համակարգի ներդրումը: Նրանք այն համարում են ոչ արդյունավետ, հատկապես մտավոր խնդիրներ ունեցող աշակերտների հետ աշխատանքի տեսանկյունից Հատուկ դպրոցների վերականգնման անհրաժեշտությունն արդիական է այս տեսակետն ունեցող ուսուցչական անձնակազմի ներկայացուցիչների համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համընդհանուր ներառական համակարգի ներդրումը ԿԱՊԿՈՒ աշակերտների կրթական միջավայրի պարզ փոփոխությամբ չի սահմանփակվում: Այսինքն՝ ԿԱՊԿՈՒ աշակերտների մուտքը հանրակրթական դպրոցներ դեռևս բավարար չէ համակարգը ներդրված համարելու համար: Կան մի շարք համակարգային խնդիրներ, որոնց շտկումը միայն կարող է ապահովել արդյունավետ ներառում: Թեև ներառական կրթության նկատմամբ վերաբերմունքը և մոտեցումները ենթարկվել են որոշակի փոփոխությունների, սակայն համակարգը մերժող ուսուցիչների թիվը ևս փոքր չէ: Այսպիսի տրամադրվածությունը իր հետևանքները կարող է ունենալ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքի արդյունավետության տեսանկյունից: Ուստի՝ կա շարունակական աշխատանքի և վերապատրաստումների անհրաժեշտություն:

1. ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական նվաճումները և նրանց արդյունավետ ներգրավումը երաշխավորելու նպատակով ավելացնել բազմամասնագիտական թիմի և ուսուցչի օգնականների ներգրավվածությունը օրական և ժամային կտրվածքով:
2. Կազմակերպել ուսուցչական անձնակազմի համար ներառական կրթության նորարարական մեթոդների ու հնարների վերաբերյալ վերապատրաստումներ, մասնավորապես ներառական կրթության կազմակերպման, դասապրոցեսում կիրառելի հատուկ մեթոդների կիրառման վերաբերյալ նորագույն մոտեցումներին՝ ծանոթանալու, տիրապետելու և մանկավարժական գործընթացում ակտիվորեն գործածելու նպատակով, ինչը նաև չի կաշկանդի թե՞ ուսուցչին, թե՞ աշակերտին ու ծնողին:
3. ԿԱՊԿՈՒ երեխաների համար ավելացնել արհեստագործական դասաժամեր, ինչը կնպաստի ԿԱՊԿՈՒ աշակերտների մոտորիկայի զարգացմանը, միաժամանակ հնարավորություն կտա նոր հմտություններ ձեռք բերել:
4. Բուհական հաստատությունների մանկավարժական ֆակուլտետներում (հատուկ կրթության և հոգեբանության ֆակուլտետների հետ մեկտեղ) ավելացնել ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ պրակտիկ աշխատանքին վերաբերող թեմաներ/դասաժամեր: Սա կնպաստի նրան, որ յուրաքանչյուր ուսուցիչ, օրինակ՝ մաթեմատիկայի, աշխարագրության և այլ մասնագետ, տիրապետի ԿԱՊԿՈՒ աշակերտի հետ աշխատելու մեթոդների:
5. Դասընթացներ կազմակերպել ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների համար՝ նրանց տեղեկացվածությունը բարձրացնելու նպատակով: Սա կօգնի ծնողներին համակողմանիորեն տիրապետել երեխայի խնդրին և նպաստել կրթական պրոցեսին՝ սերտացնելով ուսուցչական կազմի հետ համագործակցությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում»- https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_8.pdf
2. «Հանրակրթության Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենք- <https://www.arlis.am/documentview.aspx?docid=94683>
3. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, 2014- <https://www.arlis.am/documentview.aspx?docid=94683>
4. CoE European Committee of Social Rights, *Report on the Non-Accepted Provisions of the European Social Charter*, 8–9. Yerevan, 2016. <https://rm.coe.int/090000168066b9a0>

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Ուսուցիչների հետ խորքային հարցազրույցի ուղեցույց

Դասավանդվող առարկա _____

Քանի տարվա դասավանդման փորձ ունեք _____

Այս դպրոցում աշխատանքային ստաժ _____

Կրթությունը (Բուհ, մասնագիտություն) _____

Տարիք _____

Սեռ _____

Ներածական հարցեր: Ո՞րն է դպրոցում դասավանդման հիմնական Ձեր առարկան: Որքա՞ն ժամանակ է, որ աշխատում եք ԿԱՊԿՈՒ երեխաների հետ: Ո՞ր դասարաններում եք դասավանդում:

1. Ի՞նչ դրական և բացասական կողմեր ունի ներառումը՝ ըստ ձեզ:

2. Ի՞նչ դժվարություններ ունի երեխան ա. դասերի ժամանակ բ

. միջանձնային հարաբերություններում

3. Ի՞նչ լուծումներ կառաջարկեք ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքը բարելավելու համար:

4. Որո՞նք են սովորողի /ների ուժեղ կողմերը,

5. Ո՞րն է նրա/նրանց զարգացման, հմտությունների, կարողությունների և գիտելիքների առկա մակարդակը,

6. Որո՞նք են այն միջավայրային խոչընդոտները, որ խանգարում են սովորողի ուսումնառությանը:

7. Ինչպե՞ս կբնութագրեք ԿԱՊԿՈՒ աշակերտների հետաքրքրվածությունը կրթության նկատմամբ (հաճախում, դասերին պատշաճ ներկայացում, դասապրոցեսին ներգրավվածություն):

8. Ինչպիսի՞ բարդությունների եք հանդիպում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքում:

9. Ինչպիսի՞ մեթոդներ եք կիրառում ԿԱՊԿՈՒ երեխայի արդյունավետ ներառումն ապահովելու համար:

10. Ինչպե՞ս եք աջակացում ԿԱՊԿՈՒ երեխաներին հաղթահարել ուսուցման ընթացքում առաջացած խոչընդոտները:

11. Որքանո՞վ են ծնողները ներգրավվում ԿԱՊԿՈՒ երեխայի կրթական գործընթացին և ինչպիսի առավելություններ ունի դա:

12. Ըստ Ձեզ՝ ինչպիսի՞ գործոններ կարող են դրական ազդել ԿԱՊԿՈՒ աշակերտների դասապրոցեսների նկատմամբ հետաքրքրվածության բարձրացմանը:

13. Ինչպիսի՞ խնդիրների էք բախվում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանում:

14. Ի՞նչ խնդիրներ կառանձնացնեք ներառական կրթության և հանրակրթական ծրագրով համատեղ սովորող աշակերտների դասապրոցեսի կազմակերպման գործնթացում:

15. Ինչպե՞ս կգնահատեք ԿԱՊԿՈՒ աշակերտների սոցիալականացման և մյուս աշակերտների հետ միջանձնային հարաբերությունների ձևավորման պրոցեսը, (արդյո՞ք մեկուսացում, խտրականություն նկատել էք):

16. Ովքե՞ր են սովորողի ընկերները:

17. Ինչպե՞ս կգնահատեք ուսուցչական կազմի վերաբերմունքը ներառական կրթության նկատմամբ:

18. Ի՞նչ դասընթացների էք մասնակցել ներառական կրթության վերաբերյալ:

19. Կցանկանա՞ք արդյոք անցնել նոր վերապատրաստումներ: Եթե այո, ապա ի՞նչ թեմաներով:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների հետ անհատական խորքային հարցազրույցի հարցաշար

1. Ինչպե՞ս եք, ընդհանուր առմամբ, գնահատում ներառական կրթության կազմակերպումն այս դպրոցում: Կո՞ղմ եք ներառական կրթության այս մոդելին:

2. Ի՞նչ կարծիքի եք ձեր երեխաների հետ աշխատող բազմամասնագիտական խմբի անդամների մասին:

3. Ի՞նչ մասնագետներ են աշխատում ձեր երեխաների հետ: Ի՞նչ ձեռքբերումներ կան:

4. Ինչպե՞ս կարելի է ավելի բարելավել նրանց աշխատանքը:

5. Բազմամասնագիտական թիմի աշխատանքի արդյունքում նկատելի է արդյո՞ք կրթական և հոգեբանական առաջընթաց ձեր երեխաների մոտ:

6. Ինչպե՞ս կգնահատեք կրթական ծրագրերի հարմարեցվածությունը ձեր երեխաների առանձնահատկություններին:

7. Ինչպե՞ս կգնահատեք ուսուցիչների հետ համագործակցությունը ձեր երեխաների կրթական կարիքները բավարարելու տեսանկյունից:

8. Ինչպե՞ս կգնահատեք ուսուցիչների և բազմամասնագիտական թիմի արձագանքը կրթական գործընթացում ձեր երեխայի մոտ առաջացած հնարավոր բարդություններին:

9. Ի՞նչ դժվարություններ ունի երեխան ա. դասերի ժամանակ

բ. միջանձնային հարաբերություններում

9. Ինչպես կմեկնաբանեք ձեր երեխայի տրամադրվածությունը դպրոցի և դասապրոցեսի նկատմամբ:

10. Ինչպե՞ս եք գնահատում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների և նրանց ծնողների վերաբերմունքը ձեր երեխաներին:

11. Ի՞նչ մտահոգություններ ունեք ձեր երեխաների կրթության հետ կապված:

12. Ի՞նչ առաջարկություններ ունեք Ձեր երեխաներին մատուցվող կրթական ծառայությունները բարելավելու առումով:

ՀԱՎԵԼՎԱԾ 3 ԽՈՐՀԱՅԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ/ՓՈԽՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀԵՏ

Ներածական հարցեր: Քանի՞ տարի է, որ դպրոցի տնօրեն եք: ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի ինչպիսի՞ փորձ ունեք:

Վերապատրաստումների վերաբերյալ հարցեր: Ինչպիսի՞ վերապատրաստումներ են անցել ուսուցիչները ներառական կրթության վերաբերյալ: Արդյո՞ք վերապատրաստումները կրում են պարբերական բնույթ: Ո՞ւմ/ո՞ր կազմակերպության կողմից են իրականացվել վերապատրաստումները: Ինչպե՞ս կգնահատեիք վերապատրաստումների արդյունավետությունը: Արդյո՞ք ուսուցիչների գիտելիքները և հմտությունները բավարար են ԿԱՊԿՈՒ երեխաներին դասավանդման համար: Իսկ Դուք անձամբ մասնակցե՞լ եք որևէ վերապատրաստման այս թեմայով: Արդյո՞ք առկա է լրացուցիչ վերապատրաստումների կարիք:

1. Ինչպե՞ս եք, ընդհանուր առմամբ, գնահատում ներառական կրթության կայացվածությունը հանրակրթական դպրոցներում: Կո՞ղմ եք ներառական կրթության այս մոդելին

2. Խնդրում եմ ասեք, ձեր դպրոցում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը (նշել ըստ կրթական աստիճանների): _____

3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաները հետևյալ ո՞ր ֆունկցիայի խանգարումներն ունեն:

Ֆունկցիայի խանգարման տեսակ Աշակերտների թիվը

- 1) խոսքի խանգարում ունեցող երեխաներ
- 2) լսողության խանգարում ունեցող երեխաներ
- 3) տեսողության խանգարում ունեցող երեխաներ
- 4) մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաներ
- 5) հենաշարժողական համակարգի խանգարումներ ունեցող երեխաներ
- 6) հոգեբանական զարգացման խնդիրներ ունեցող երեխաներ

7) վարքային և հուզականային ոլորտի խանգարումներ ունեցող երեխաներ

4 Քանի՞ մասնագետ է ընդգրկված բազմամասնագիտական թիմում
(հոգեբանամանկավարժական աջակցության խմբում):

5 Ի՞նչ մասնագետներ են:

6 Արդյո՞ք լրացուցիչ մասնագետի կարիք զգացվում է:

6 Ինչպե՞ս եք գնահատում հոգեբանամանկավարժական աջակցության խմբի
մասնագիտական գիտելիքները և կարողությունները: Ինչպե՞ս կարելի է դրանք
բարելավել:

8. Ինչպե՞ս եք գնահատում ԿԱՊԿՈւ երեխաների ընդգրկվածությունը և համարժեք
մասնակցությունը դասապրոցեսին:

9. Ի՞նչ խնդիրների են բխվում ուսուցիչները ԿԱՊԿՈւ երեխաների հետ
աշխատանքում: Թվարկեք 3 կարևորագույնները: _____

10. Ի՞նչ խնդիրներ եք ունենում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք
չունեցող երեխաների և ծնողների՝ ԿԱՊԿՈւ երեխաների հետ համատեղ սովորելու
վերաբերմունքի հետ կապված:

11. Օրենսդրական, նորմատիվային ինչպիսի՞ խնդիրներ եք տեսնում ներառական կրթության իրականացման գործընթացում:

12. Ծնողների հետ աշխատանքի ի՞նչ մեթոդներ եք կիրառում:

13. Արդյո՞ք Ձեր դպրոցն իրականացնում է տնային ուսուցում: Եթե այո, ապա, ի՞նչ մեխանիզմով է այն իրականացվում և քանի՞ երեխայի համար: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:

14. Ըստ Ձեզ, որո՞նք են ներառական կրթության ներդրման խոչընդոտները:

ՀԱՎԵԼՎԱԾ 4 ԲԱԶՄԱՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԻՄԻ ՀԵՏ ԽՈՐՔԱՅԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

1. Քանի՞ մասնագետից է բաղկացած ձեր բազմամասնագիտական խումբը: Ի՞նչ մասնագետներ են ընդգրկված խմբում:

2. Ի՞նչ մասնագետ էք և արդյո՞ք խմբում ընդգրկված էք հենց այդ մասնագիտությամբ, (էթե ոչ, ապա ի՞նչ մասնագիտությամբ էք ներգրավված):

*3. Ի՞նչ վերապատրաստում էք անցել բազմամասնագիտական թիմում ներգրավվելու համար (էթե կրթությունը չի համապատասխանում):

4. Համագործակցու՞մ էք արդյոք առարկայական ուսուցիչների հետ: Ինչպե՞ս:

5. Մասնակից դարձնու՞մ էք արդյոք ԿԱՊԿՈՒ երեխայի ծնողին երեխայի զարգացման խնդրից/ներից/ բխող ուսուցման համար անհրաժեշտ առանձնահատուկ գործողությունների պլանավորմանը և իրականացմանը /դպրոցում, տանը/: Ինչպե՞ս:

6. Ինչպիսի՞ն է ձեր համագործակցությունը ԿԱՊԿՈՒ աշակերտի հետ:

7. Ինչպե՞ս կգնահատեք ուսուցչական կազմի վերաբերմունքը ներառական կրթության նկատմամբ:

8. Ինչպե՞ս կգնահատեք ԿԱՊԿՈԻ աշակերտների սոցիալականացման և մյուս աշակերտների հետ միջանձնային հարաբերությունների ձևավորման պրոցեսը, (արդյո՞ք մեկուսացում, խտրականություն նկատել եք) :

9. Մասնակում եք արդյո՞ք պարբերաբար վերապատրաստումների: Վերջին անգամ ե՞րբ եք վերապատրաստվել, ի՞նչ թեմայով, ու՞մ կողմից:

10. Կցանկանա՞ք արդյոք անցնել նոր վերապատրաստումներ: Եթե այո, ապա ի՞նչ թեմաներով:

11. Համարո՞ւմ եք արդյունավետ ներառական կրթության կազմակերպումը ձեր դպրոցում: Ի՞նչ խոչընդոտների եք բախվում:

12. Ի՞նչ առաջարկներ ունեք ներառական կրթության արդյունավետությունը բարելավելու համար:

ՀԱՎԵԼ ՎԱԾ 5
ԿԱՊԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ ԽՈՐՔԱՅԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

1. Սիրո՞ւմ ես դպրոցը: Այո/ոչ Ինչու՞ :

2. Ինչպիսի՞ն է շփումդ համադասարանցիների հետ:

3. Ինչպե՞ս կնկարագրես ինքդ քեզ որպես աշակերտ:

4. Ինչպե՞ս են անցնում ձեր դասերը:

5. Ո՞ր առարկան ես շատ սիրում: Ինչու՞ :

6. Ինչպիսի՞ խնդիրների ես հանդիպում դպրոցում:

7. Ի՞նչն է քեզ ամենից շատ անհանգստացնում դասերի հետ կապված: Ինչու՞ :
